



ԿԱՊԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ /ՕՐՀՈՒՄ ԿԵՆՏՐՈՆ/
PUBLIC ENVIRONMENTAL INFORMATION CENTRE OF KAPAN
КАПАНСКИЙ ОБЩЕСТВЕННЫЙ ЦЕНТР ЭКОЛОГИЧЕСКОЙ ИНФОРМАЦИИ

ՀՀ Մյունիքի մարզի Կապան, Գ.Նժդեհի հեռ.09379-59-21 e-mail info_kapan@aarhus.am, kapan.aarhus@mail.ru

Կ N-001/14

< 02 > 06 2014

ՀՀ բնապահպանության նախարար

Արամայիս Գրիգորյանին

Կապանի Օրհուս կենտրոնի

Համակարգող Աշոտ Ավագյանից

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն նախարար

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացված Օրհուսի համաձայնագիրը և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի դրույթները, կարևորելով շրջակա միջավայրի, մարդկանց իրազեկության աստիճանի բարձրացումը, խնդրում եմ Ձեզ, Կապանի Օրհուս կենտրոնին տրամադրել պաշտոնական մանրամասը տեղեկատվություն հետևյալի մասին:

1. Կապան քաղաքի տարածքում գտնվող բազմաթիվ “լքված” հանքերի /որոնք շահագործվում էին խորհրդային տարիներին և այսօր չեն շահագործվում/ հետագա ճակատագրի մասին: Մասնավորապես անհանգստացնում է Կապան քաղաքի կենտրոնում գտնվող հանքերի և Կապանի մերձակայքի հանքախորշերը, որոնք չունեն դարպասներ և վտանգ են ներկայացնում երեխաների համար: Իսկ անձրոտ օրերի հանքախորշերից դուրս եկող դեղնաշականակազույն ծանր մետաղներով աղտոտված գրունտային ջրերը/կից ՀՀ Ազգային ակադեմիայի էկոլոգանոոսֆերային հետազոտական կենտրոնի ուսումնասիրության հաշվետվություն/ լցվում է փողոցները և շենքերի բանուկ մասերը, որտեղ խաղում են երեխաները:
2. Ով է պատասխանատու այդ հանքախորշերի անվտանգության պահպանության և գրունտային ջրերի կարգավորված ջրահեռացման համար:
Կից ներկայացվում է լուսանկարներ նշված փաստերի վերաբերյալ:

“Տեղեկատվության մատչելիության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջների համաձայն, խնդրում եմ մեր հարցմանը պատասխանել ամբողջությամբ և 5-օրյա ժամկետում(բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության /30 օրյա ժամկետ/): Տեղեկատվության տրամադրմանը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքերի մասին (“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 11-րդ հոդված):

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքներով՝ Աշոտ Ավագյան

Կապանի Օրհուս կենտրոնի համակարգող

2.3. Ծանր մետաղների պարունակությունները

Աղ. 4-ում ամփոփված են ծանր մետաղների պարունակությունները ըստ առանձին մուշարկման կետերի:

2.3.1. Ողջի գետի ծախսակողմյան բնական ջրահոսքերի ջրերում ծանր մետաղների պարունակությունները

Ինչպես ցույց են տալիս աղ. 4-ի տվյալները, Ողջի գետի ծախսակողմյան բնական հոսքերի ջրերում բոլոր ծանր մետաղների պարունակությունները գործնականում չեն հասնում հաստատված նորմերին: Միայն Կավարտ գետի ջրերում գրանցվել են այս տարածքին հատուկ երեք հանքային տարրերի (Cd, Cu, Zn) համեմատաբար բարձր պարունակություններ:

Հետազոտված ջրահոսքերում Cd-ի պարունակությունները տատանվում են լայն սահմաններում՝ 0.01–0.85 մկգ/լ: Cd առավելագույն պարունակությունը գրանցվել է Լորաշենիկ և Արծվանիկ գետերի միախառնման տեղից մուշարկված ջրերում՝ 0.85 մկգ/լ, որը կազմում է ՍԹԿ 85%-ը: Բացառություն են կազմում Կավարտ գետի ջրերը, որոնց մեջ Cd պարունակությունը կազմում է 5.52 մկգ/լ, որը բարձր է թե՛ ԵՄ (5 մկգ/լ), և թե՛ ՍԹԿ (1 մկգ/լ) նորմերից:

Աղյուսակ 4. Ծանր մետաղների պարունակությունները ջրերում

Ցուցանիշ	As	Cd	Co	Cr	Hg	Mo	Ni	Pb	Se	Cu	Zn	
	մկգ/լ										մգ/լ	
Նորմեր	ԵՄ*	10	5	–	50	1	–	20	10	10	–	
	ՍԹԿ**	50	1	100	–	0.5	250	100	30	1	5	
Ողջի գետի ավազանի վտակներ												
Մուշարկման կետեր***	KFB-2	1,73	0,01	1,21	2,28	0,04	18,16	1,41	0,40	1,60	0,12	0,07
	KFB-3	0,86	0,01	0,19	0,97	0,02	170,00	0,79	0,54	0,42	0,02	0,06
	KFB-4	0,83	0,85	0,72	1,45	0,02	137,90	1,12	1,82	0,38	0,05	1,15
	KFB-7	0,39	0,20	1,68	0,91	0,10	6,55	1,01	0,02	0,38	0,66	0,12
	KFB-8	0,30	5,52	20,00	0,52	0,03	3,21	3,85	0,19	0,90	1,70	14,02
	KFB-9	1,08	0,42	0,88	0,38	չ/հ	6,40	1,91	չ/հ	–	0,0077	0,11
Հանրուղիների և արդյունաբերական հոսքերի ջրեր												
	KFB-1	3,42	8,75	17,13	2,28	0,09	5,18	3,18	0,19	2,28	3,80	9,83
	KFB-5	0,47	n/d	0,18	1,45	0,01	21,39	5,53	3,01	0,53	0,01	0,06
	KFB-12	13,44	16,30	46,74	4,16	0,03	13,37	15,36	0,28	1,41	20,20	10,88
	KFB-6	4,46	10,52	40,10	2,13	0,05	10,91	8,96	0,68	1,77	15,18	6,75
	KFB-10	0,70	0,02	0,81	0,80	3,31	8,27	0,33	0,05	0,06	0,10	0,75
	KFB-11	0,15	0,01	0,27	0,70	0,03	87,65	0,70	0,12	0,32	0,02	0,06

Ծանուցում. չ/հ՝ հայտնաբերված չէ; «–»՝ որոշված չէ, * նորմեր. ԵՄ՝ ըստ Directive98/83/EC, ** ՍԹԿ՝ ըստ [7], *** մուշարկման կետերը բերված են նկ.4-ի պայմանական նշաններով:

Գետերի ջրերում Cu-ի պարունակությունները տատանվում են՝ 0.008–1.7 մգ/լ սահմաններում: Առավելագույն ցուցանիշը (1.7 մգ/լ) գրանցվել է Կավարտ գետի ջրերում, սակայն այս պարունակությունը գտնվում է թե՛ ԵՄ (2 մգ/լ), և թե՛ ՈՂ (1 մգ/լ, ՍԹԿ) ընդունված նորմերի սահմաններում: